



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ԳԳ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1, 403 սեմյակ
հեռ (+374) 25324114, 91199324
էլ. փոստ info_alaverdi@earthus.am
anushhevyan@rambler.ru

Lori, Alaverdi,
Zoravar Andranik str.8/1, 403
Tel. (+374) 25324114, 91199324,
E-mail info_alaverdi@earthus.am
anushhevyan@rambler.ru

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ

Տնօրեն պարոն

Ս. Արզումանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Արզումանյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,

խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին

1. Լոռու մարզի Մեծ Այրում եւ Ճոճկան համայնքերից «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին հատկացված արտադրական եշանակության հողատարածքներում իրականացվում են արդյոք երկրաբանահետախուզական աշխատանքներ
2. Եթե այո, ապա ե՞րբ կավարտվեն այդ աշխատանքները
3. Ու՞մ կողմից եւ ե՞րբ են պատվիրվել վերոհիշյալ աշխատանքները
4. «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ կողմից պատվիրվել է արդյոք նախագծա-նախահաշվային փաթեթի պատրաստում՝ նոր պոչամբարի կառուցման վերաբերյալ

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հեռավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով՝

Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող

30.03.2015թ.

Անուշ Էվոյան